



**Տարածքներում և  
միջոցառումների ընթացքում  
անվտանգ ունկնդրելու  
համաշխարհային չափորոշիչ**



## Ինչ է իրենից ներկայացնում անվտանգ ունկնդրելը

Անվտանգ ունկնդրելը վերաբերում է այն սովորություններին և վարքագծին, որոնք թույլ են տալիս երաժշտությունը վայելել՝ միաժամանակ նվազեցնելով լսողությանը հասցվող անդառնալի վնասների ռիսկը:

Անվտանգ ունկնդրելը կարող է կանխել լսողության կորուստը:


## Ո՞րն է փակ տարածքում անվտանգ ունկնդրելու համաշխարհային չափորոշիչը միջոցառումների ժամանակ

ԱՀԿ-ն մշակել է հիմնավորված առաջարկությունների մի շարք՝ նպատակաուղղված ժամանցի վայրեր և միջոցառումներ այցելող մարդկանց լսողության կորստի ռիսկի նվազեցմանը:

Սա կազմակերպության արձագանքն է բարձր ձայների պատճառով լսողության կորստի հետ կապված աճող մտահոգությանը:

Չափորոշիչ՝ կազմված 6 առանձնահատկություններից, կիրառվում է այնպիսի վայրերի համար, ինչպիսիք են գիշերային ակումբները, դիսկոտեկները, բարերը, համերգասրահները և փառատոները:

## Ինչու՞ է անվտանգ ունկնդրելը կարևոր միջոցառումների ժամանակ:

 Լսողության անդառնալի կորուստ առաջանում է բարձր ձայների պատճառով:

## 1. 1 միլիարդ

երիտասարդներ վտանգված են լսողության կորստի, քանի որ ունկնդրման փորձության են ենթարկվում ոչ ապահով պայմաններում:

Բարձր և միջին եկամուտ ունեցող երկրներում, 12 – 35 տարեկան անձանց

## 40%-ը

ժամանցի վայրերում ենթարկվում են բարձր ձայնային ունկնդրման փորձության:

## Ինչպե՞ս կարող է անվտանգ ունկնդրելու չափորոշիչը կիրառվել միջոցառումների ժամանակ

### Կառավարությունները

կարող են մշակել օրենսդրություն կամ կանոնակարգեր, որոնք կվերահսկվեն չափորոշիչներին համապատասխան և կուղեկցվեն անվտանգ ունկնդրելու վերաբերյալ իրազեկման քարոզարշավներով:

### Միջոցառման վայրերի և միջոցառումների հյուրընկալող կողմերը/մենեջերները և համապատասխան արդյունաբերության ասոցիացիաները

կարող են ընդունել չափորոշիչն ու առանձնահատկությունները կիրառել կամավոր հիմունքներով:

### Երաժիշտների և ակուստիկ ինժեներների կրթական հաստատությունները

կարող են ներառել անվտանգ ունկնդրման մոդուլ՝ կենտրոնանալով չափորոշիչի կարիքների, հիմնավորման, առավելությունների և առանձնահատկությունների վրա:

## Որո՞նք են միջոցառումների վայրերում և միջոցառումների ընթացքում անվտանգ ունկնդրելու չափորոշիչի կիրառման առավելությունները:

### Կառավարությունները

Լսողության կորուստը համաշխարհային հանրային առողջությանը սպառնացող խնդիր է, որը գնալով աճում է: Լսողության կորստի կանխարգելումը կօգնի նվազեցնել լսողության խնամքի կարիքը, բարելավել կյանքի որակը և բարձրացնել արտադրողականությունը:

### Միջոցառման վայրերի և միջոցառումների սեփականատերեր/մենեջերներ, արդյունաբերության ասոցիացիաներ:

Հաճախորդների լսողական առողջությունը հարգելը և նրանց ունկնդրման փորձի բարելավումը ֆինանսական առումով բարենպաստ են մի ոլորտի համար, որը հենվում է նրանց լսելու կարողության վրա:

### Ակուստիստներ, ինժեներներ, երաժիշտներ, միջոցառումների կազմակերպիչներ և այլոք

Դա կնվազեցնի լսողության վնասման վտանգը ինչպես հանդիսատեսի, այնպես էլ նման վայրերում և միջոցառումների շրջանակներում աշխատող մարդկանց մոտ:

## Միջոցառումների ժամանակ անվտանգ ունկնդրելու չափորոշիչի վեց առանձնահատկություններ

### 1. Չայնի մակարդակի սահմանափակում

100dB L<sub>Aeq 15 րոպե</sub>\* առավելագույն սահմանի՝ ձայնն անվտանգ և հաճելի դարձնելով հանդիսատեսի համար:



### 2. Չայնային մակարդակի մոնիտորինգ

Չայնի մակարդակի ուղիղ մոնիտորինգ և ձայնագրում նշանակված աշխատակազմի կողմից չափագրված չափման սարքավորում օգտագործելու միջոցով:



### 3. Դահլիճի ակուստիկայի և ձայնային համակարգերի օպտիմալացում

Չայնային համակարգի և միջոցառման վայրի ակուստիկան պետք է օպտիմիզացված լինեն, որպեսզի ապահովեն հաճելի ձայնային որակ և ապահով լսողության մակարդակ բոլորի համար:



### 4. Անձնական լսողության պաշտպանության հասանելիություն

Լսողության պաշտպանությունը, ինչպիսիք են լսողության պաշտպանիչ խցանները, պետք է հասանելի լինեն հանդիսատեսի անդամներին՝ ցուցումներով հանդերձ:



### 5. Մուտք դեպի հանգիստ գոտի (ներ)

Հանգիստ գոտիները լսարանին հնարավորություն են տալիս հանգստացնել ականջները և նվազեցնել լսողության վնասման վտանգը:



### 6. Ուսուցման և տեղեկատվության ապահովում

Աշխատակազմը և հանդիսատեսը պետք է տեղեկացված լինեն գործնական քայլերի մասին, որոնք նրանք կարող են ձեռնարկել անվտանգ ունկնդրում ապահովելու համար



\*L<sub>Aeq 15 րոպե</sub> ձայնի չափված միջին մակարդակն է տասնհինգ րոպեի ընթացքում:

## Ինչ կարող եք անել միջոցառման վայրերում և միջոցառումների ընթացքում նպաստելու անվտանգ ունկդրմանը:

Քաղաքացիական հասարակությունը կարող է կարևոր դեր ունենալ անվտանգ ունկդրելու չափորոշիչի մասին իրազեկվածության բարձրացման և կառավարման մարմինների, միջոցառման վայրերի և միջոցառումներ հյուրընկալողների սեփականատերերի/կառավարիչների, ինչպես նաև միջոցառումների աշխատակիցների շրջանում այն ներդրման հարցում:

## Լսել կյանքի համար, լսել խնամքով Լսելը դարձնել անվտանգ

Adapted from @World Health Organization, WHO/UCN/NCD/SDR 21.1  
Translated by NGO “The Voice of Silence”. Republic of Armenia.

